ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» մարտի 2012թ. N 172-Ն

ք.Ստեփանակերտ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել՝

1) կազմակերպությունների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կազմակերպությունների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) անհատ ձեռնարկատերերի, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) անհատ ձեռնարկատերերի, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«28» մարտի 2012թ.
N 172-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԹՂԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կազմակերպության լրիվ անվանումը և կազմակերպաիրավական տեսակը
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
3. Նշում՝ հաշվառման վերցված հարկային մարմնի վերաբերյալ և հաշվառման վերցման տարեթիվը
4. Հարկային մարմնի պետի անունը, ազգանունը, ստորագրությունը և կնիքը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«28» մարտի 2012թ.
N 172-Ն որոշման

ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը և կազմակերպաիրավական տեսակը)

ՀՎՀՀ

Հաշվառման է վերցված _____հարկային մարմնի կողմից

«_____» _____ 20 թ.

_____ հարկային մարմնի պետ_____ _____
(անունը,ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«28» մարտի 2012թ.
N 172-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԹՂԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը (անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում նշում է «Անհատ ձեռնարկատեր»)

2. Անձնագրային տվյալները

3. Լուսանկարը

4. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

5. Նշում՝ հաշվառման վերցված հարկային մարմնի վերաբերյալ և հաշվառման վերցման տարեթիվը

6. Հարկային մարմնի պետի անունը, ազգանունը, ստորագրությունը և կնիքը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«28» մարտի 2012թ.
N 172-Ն որոշման

ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

._____.

_____ | լուսանկար |
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը*) | (3x4 չափսի) |

_____
(անձնագրային տվյալները)

._____.

ՀՎՀՀ |

Հաշվառման է վերցված _____հարկային մարմնի կողմից

«_____» _____ 20 թ.

_____ հարկային մարմնի պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

* Անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև «Անհատ ձեռնարկատեր» նշմամբ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՎԱԳՅԱՆ